Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8067

1855
91(47.925).04
N 40

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

Ճանապարհորդութիւն

ԿՐ

ԴԱՒԻԹԺԻՑ ՆԱԽԻՋԵՒԱՆ

Հ8101

Ուրեշ

1876

ԹԻՖԼԻՍ

Ի տպարանի Հայրարքումայ Էնֆիաճեանց եւ Ընկ.

26

16137

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸՆ

„Մեղու Հայաստանի“

ԼՐԱԳՐԻ

Дозволено цензурою, Тифлисъ, 18-го ноября 1875-го года.

Հանրային գրադարան
ՀԱՅԱՍՏԱՆ
93-2013

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ԹԱՒՐԻԶՈՒՑ

ՆԱԽԻՋԵՒԱՆ·

Ա·

Ես այստեղ միայն կամենում եմ նկարագրել իմ ընթերցողներին այն ուղևորութիւնը, զոր ես առացայ այդ երեքօրեայ ուղևորութեան միջոցին։ Եւ իմ ճանապարհորդութիւնս չունի այլ ոչն նպատակ, եթէ ոչ յառաջուց իմացնել ուղևորներին ինչ որ նոքա հանդիպելու են ճանապարհին։

Ա. հասարակ այս վերջին ժամանակներումը չատ ասացին և խօսեցին Պարսկաստանի վերայ, լրագրութեան մէջ մի քանի յօդուածներ տպուեցան, որոնք ունէին նպատակ մատնացոյց լինելու այդ արդաւանդ երկրի վերքերի վերայ և բաղումք ես մի փառաւոր և մեծ յեղափոխութիւն դուշակեցին ներկայ Վեհապետի օրով։ Շահի Ռէյատերի հետ կապած դաշնադրութիւնն իւր տարապայման դի-

ջողութիւններով յապուշ է կրթել բոլորին, զրեթէ Պարսկաստանի բոլոր հարստութիւնն, երկրի ներքոյ մթերուած գանձերն, Ռէյտերի ձեռքն էին անցել. այդ պատճառաւ է, որ պ. Ռէյտերը մեծամեծ գումարներ է ծախս անում տաճարապատիկն ու բիւրապատիկն ստանալու, բայց իւր յոյսերն չքացան և անշուշտ չքանալու չէին, եթէ միայն Բրիտանական տէրութիւնն յօժարէր նպաստել և պաշտպանել իւր հալածակին։ Տեսնենք թէ որքան է յաջողելու նոր դաշնագրութիւնն, որ Շահն հաստատել է մի Ռուս ընկերութեան հետ Թաւրիզից Ջուլֆա երկաթուղոյ շինութեան համար, այդ երկաթուղին անշուշտ պիտի վերականգնէ Թաւրիզու յաջող և առաղին վաճառականութիւնն, որ այժմ անկած է։

Որևիցէ մի ձեռնարկութիւն, որ երկրին բարգրութիւն ընձեռելու նպատակաւ չէ սկսւում, այդ իսկ շահագիտական պատճառով, անշուշտ աւելի վնասներ կ՚արտադրէ քան օգուտներ։ Շատով կիմանանք թէ որ նպատակաւ Պարսկական տէրութիւնը կնքել է այդ դաշնագրութիւնը, բայց գաղնանք մեր նպատակին։

Բ.

Զը նայելով, որ ես յոլով անգամ խօսել եմ Թաւրիզու և նորա Հայ հպատակութեան վերաբերեալ, սակայն թողնելով այդ քաղաքը, ես դարձեալ ումպէտս չեմ համարում մի քանի խօսք ասել(*)։

Հետաքրքրելով պատմութիւնն, մենք կլսենենք, որ այդ անուանի քաղաքը յաճախակի բազմաթիւ նշանաւոր դիպուածոց և սոսկալի արիւնհեղութեանց տեսարան է հանդիսացել։ Պարսիկք, Արաբացիք, Սելճուղեանք, Օսմանցիք հետզհետէ ընդ բռամբ ածելով այդ քաղաքը՝ կողոպտեցին, աւերեցին, հարստահարեցին, բայց նա իւր յաջողակ դրից և շրջակայից արդասաւէտութեան շնորհիւ դարձեալ վերականգնեցաւ և ընդդիմանալով մեծ և սաս-

(*) Ես պատրաստում եմ թէ Ատրպատականի եւ թէ Պարսկաստանի Հայոց ընդհանուր վիճակագրութիւնը։ Մեր ազգայինք գիտեն թէ որքան պակասութիւն է զգում մեր գրականութիւնը մի այդպիսի հրատարակութեան, ուստի եւ երբ վերջացնեմ եւ յաղթեմ զանազան անյաջող հանգամանաց, որոց ես հանդիպեցայ այդ ասպարիզի մէջ, կը փութամ ի լոյս ընծայել ճոխ տեղեկութեամբ Պարսկաստանի Հայոց, նոցա կենաց, վարուց, եկեղեցեաց, քահանայից, ուսումնարանաց, հին երեւելի անձանց եւ այլոց վերայ։ Այդ գործն յաջող տանելու մէջ ինձ մեծապէս օգնեց Անդրէաս Սրբազանն, հրամայելով իմ խնդրանօք մի նոր եւ ստոյգ վիճակագրութիւն կազմել. իսկ Գրիգորիս Սրբազանն Սպահանու յատուկ նամակաւ խոստացել է ինձ մեծ եւ շատ կարեւոր տեղեկութիւնք վիճակագրականք եւ պատմականք Պարսկաստանի Հայոց վերայ։

տիկ մրրիկների իւր գլուխն բարձրացրեց, մինչ անգամ թագաւորանիստ քաղաք լինելով։ Պատմական քննադատութեան բովից դեռ չէ անցել և զտուել այն խնդիրը, թէ ով է այդ քաղաքի բուն հիմնադիրն։ Մեր Հայ պատմութիւնից յայտնի է, որ Խոսրով Ա. Նորոգութիւնք արաւ այդ քաղաքի մէջ ի նշան այն յաղթանակին, որ արել էր Պարսից Արտաշիր թագաւորի վերայ, միւս կողմից Պարսիկ և Արաբ մատենագիրք վիճում են, որ այդ քաղաքն Հարուն ալ Ռաշիդ խալիֆայի կինն է կառուցել։ Եթէ ընդունենք ուրեմն որ Թաւրիզ շատ հին քաղաք է եղել և ի հնումն հաւակված իբրև կրակապաշտութեան գլխաւոր վայր, ինչպէս ոմանք պատմագիրք կ'աւանդեն, ապա ուրեմն ստուգութեամբ կարելի է ասել, որ այժմեան Թաւրիզի կառուցանողն խալիֆայի կինն է եղել, մանաւանդ, որ հին քաղաքի հետքերն դեռ մինչ այսօր երևում են այժմեան Թաւրիզից շատ հեռու դէպի Քրդստանի կողմերը, որոնց առընթեր գտանվում են և սեպաձև արձանագրութիւնք։ Քրդստանի մէջ մոխրաղէզ ըլուրների վերայ մոխրով լի սափորներ գտանելն մի ուրիշ ապացոյց է կրակապաշտութեան։

Բացի մարդկային աւերմունքից, նոյնպէս ըստ ոմանց արհաւիրքներ—սարսափելի երկրաշարժներ-քանիցս հիմն ի վեր տապալել են այդ քաղաքը։ մանաւանդ անուանի է այն երկրաշարժն, որոյ նկարագիրն թողել է մեզ Առաքել Վարդապետ Պատմագիրն։ Քաղաքն գրեթէ համայնապէս ջնջուեցաւ, աւերակները մինչ այսօր յայտնի են Շամդաղան կոչուած դիւղը, քաղաքի առաջին տեղը։

Աւանդութիւնն ասում է, որ Թաւրիզոյ տեղն առաջ ծով էր և մօտը մի հրաբուղխ լեառ կար։ անշուշտ ակնարկում են Մարաղայու կամ Ուրմիոյ ծովակն, որ գուցէ քաշուելով հեռացել է, և որ այժմ Թաւրիզից երկու աւուր ճանապարհաւ հեռի է։ իսկ հրաբուղխ սարը այժմ ևս նշմարվում է, բայց ի վաղուց մաքած է։

Մի քանի խօսք և Հայերի մասին։

Ինչպէս ամեն հայաբնակ քաղաքում, նոյնպէս և այստեղ տիրապետում են երկու հակառակ կուսակցութիւնք — Ղարադաղցիներ և Թաւրիզեցիներ։ Այս երկու կուսակցութեանց մէջ թագաւորում է նախանձ։ Թաւրիզեցիք չեն կարողանում տանել, որ Ղարադաղցիք, որոնք 20—30 տարի յառաջ իրենց խոհանոցի կեղտոտ ջրերով գլուխնին լուանում էին (այսպէս են կոչում նորանց)։ այժմ իրենցից հարստանալով 'ի ծառայութենէ 'ի մեծութիւն են հասել։

Եւ իրօք Ղարադաղցիք Իրեանց սեպհական ժրաջանութեամբ 20—30 տարի յառաջ գալով Թաւրիզ սկսել են նախ մի չնչին ռոճիկով և մինչև անդամ ձրիարար ծառայել տեղացի եւ օտարաքաղաքացի Հայերին, և յանկարծ կարճ միջոցում հարստութեան հասել։

Այն որ մի քանի տարիներ յառաջ ստանում էր 3 կամ 4 ռուբ. այժմ քսան, երեսուն և մինչև անդամ ութսուն հազարներով է խօսում, իսկ Թաւրիզեցիներն միշտ պինդ պահելով Իրեանց նախաւանդ գինեվաճառութիւնն, հիւսնութիւնն և ոսկերչութիւնը, ընաւ չեն աշխատել մի այլ նոր կեանք ընտրել եւ յառաջադիմութիւնք գործել, ուստի և չուտով ենթարկուել են առաջնոց աղդեցութեան։ Բայց ինչ անես, որ չար լեզուները զանազան չար բաներ են խօսում այդ հարստութեանց վերայ։ Միւս կողմից մեր չօչափած և տեսած հանդամանքներն ստիպում են մեզ հաւատալ այդ չար լեզուներին։ Հաւատալով այդ չար լեզուներին այն ժամանակ պէտք է ասել, որ այդ հարստութիւնքն անազնիւ և խաբեբայական միջոցներով են ձեռք բերուած։ Ղարադաղցիք չարունակ նկրտելով հասանել Իրեանց ցանկացեալ նպատակին—հարստութիւնք դիզելու—թոյլատրում են իրենց այդ մասին ամեն անհերելի միջոցներ գործ դնել, անխիղճ տոկ-

նիքով ծծել պարտապանների արիւնն, կեղծ տեսարակներ չինել, ըստ որում նոքա այն կարծիքն ունին թէ վաճառականութիւնն նոյն իսկ խաբեբայութիւն է. այս խօսքն ես լսել եմ նոցանէ մէկի բերանից, որ գեռ պարծենում էր թէ Մոսկով ուսում է առել... Այս տխուր երեւոյթն պատահում է ամեն տղէս հասարակութեան մէջ, որոյ անդամները դուն են գործում միայն Իրեանց սեպհական օգուտն ապահովացնելու. նոցա հոգն չէ, եթէ հասարակութիւնն կը վնասուի, նոքա սահմանափակվում են Իրեանց ճնշնական օգուտով, ուստի և դորանցից յառաջ է գալիս ցանկութիւն — օտարներից խլել, յափշտակել եւ Իրեանց սեպհականացնել։ Այս ցաւալի իրողութիւնը միայն այն ժամանակ կ'անհերեւութանայ, երբ իւրաքանչիւր մարդ մտածեց, հասկացաւ, որ պարտաւոր է փոքր էլ յօգուտ հասարակութեան գործել, երբ ըմբռնեց այն միտքն թէ հասարակութեան կորուստն և անհատների կորուստն է։ Մենք չենք ուզում ասել թէ այդ վատ երեւոյթն տիրապետում է միայն Ղարադաղցոց մէջ, ոչ. անազնիւ միջոցներով հարստութիւն դիզելը սովորութիւն է դառել շատ քաղաքների Հայ հասարակութեանց մէջ, բայց բանն այն է, որ պ. պ. Ղարադաղցիքն առանց ամաչելու պարծենում

ևն, որ յետին աստիճան չքաւորութիւնից այնքան ճոխութեան են հասել. բայց թէ մինչ այդ ճոխութեան հասանելն որքան ընտանեաց տարաբաղդութեան պատճառ են եղել, այդ դիտէ, ով որ մի փոքր ժամանակ ընակուել է նոցա մէջ։

Նոյն իսկ պանդուխտ օտարաքաղաքացի Հայերի մասին մենք չենք կարող ոչ մի ուրախալի լուր ասելով (մեր խօսքն աննշան բացառութեանց վերայ չէ)։ Դոցա մէջ նոյնպէս սիրապետում է ցանկութիւն միմեանց վնասելու, մատնելու, միմեանց մէջ անմիաբան դատուելու. վերջին ժամանակների պատահած անցքերը բաւական են այդ իրողութիւնքն չշափելի կացուցանելու։ Եւ որ առաւել ցաւալին է, մեր Թաւրիզաբնակ եղբայրները ծանօթանալով մի քանի Եւրոպացի կոչված անձանց հետ, կազմակերպութեամբ հետևում են նոցա վատ սովորութեանց, վնասակար ձևերին, և դորանով իւրեանց լուսաւորեալ են համարում..... Զարմանալի լուսաւորութիւն։ Հողը մեր ղլխին, եթէ մի քանի ասիական Ցոյներից պէտք է մենք մարդավարութիւն սովորենք։ Ի հարկէ այդպիսի հանգամանքները միշտ անբարոյականութիւն կարող են տարածել մի հասարակութեան մէջ, որ դեռ պատած է տգիտութեան աղջամուղջով

ուստի և ընդունակ չուտով իւրացնելու լուսաւորութեան վատ կողմերն։ Խօսքս այդ Եւրոպացի կոչուած անձանց հայուհիներից անպակ կին պահելու վրայ է։ Թաւրիզեցւոց մէջ քիչ կան այնպիսի ընտանիք, որոց մի անդամն այդպիսի ապօրինութեան մէջ մտած չը լինի, թէև կան այնպիսի ախմախներ, որք ուրախանում են, թէ այդ Ցոյների բերած զաւակներն Հայոց եկեղեցում են կնքվում։ Հայութիւնը կարօտ չէ այդպիսի ապօրինաւոր զաւակների, «լաւ է լինիլ չՀայ քան թերի Հայ»։

Ես յուսով եմ, որ Սրբազան Անդրէաս, ինչպէս ինքն ևս քանիցս մեզ հետ տխրել է այդ տխուր երևոյթի մասին, հարկաւոր եղած հնարներն գործ կը դնէ այդպիսի խանդարիչ անբարոյականութեան առաջն առնելու։ Բաւական է որքան մեր մէջ անհարազատ զաւակներ ունինք։

Բայց դառնանք մեր ուղևորութեան։

—

Գ.

Օրն կիւրակէ էր։ Կարծես երկինքն իւր պայծառութեամբ հրճվում էր Եկեղեցւոյ հետ, որ իւր քահանայական դասով պարտական տо-

նախամբում էր այդ օր Հոգւոյն սրբոյ ի վերնատունն իջնելն և առաքելոց հրեղէն լեզուներ բաշխելն։ Օդն զեղեցիկ էր և աւետում էր մի ամարային զով եղանակ։ Ես շուտով հագուեցայ, մի կարճ՝ բայց եռանգուն աղօթք ուղղեցի դէպի այն Գերագոյն Էակն, որ տառապելոց յոյսն է և նեղելոց սփոփիչն և ողջագուրելով մօրս և քոյրերիս շուտով աչառնակեցի յերիվար սրտիս յուզմունքը ծածկելու համար։ Բաբէ, ինչ տխրալի վայրկեան է կեանքի մէջ, երբ մարդ առաջին անգամ անջատվում է մօրից և սիրելիներից. ով որ ունի կամ ունեցել է մայր, դիտէ, որ ոչ մի սէր այնքան զօրեղ չէ որքան մայրական սէրն, նոյնպէս և ոչ մի վիշտ կարող է հաւասարիլ մայրական վշտին, մօր աչքը միշտ հսկում, մտածում, նոյն իսկ հեռուից չէ դադարում հովանաւորել մտքով իւր որդուն և մինչդեռ որդին զուցէ մոռացած է իւր մօր վշտերը, մայրը յար և անդադար իւր որդւոյ երջանկութեան համար է ճգնում։ Նուիրական և սրբազան սէր, որոյ արժէքն շատ անգամ չենք հասկանում որդիները։ Որքան տանջանք է մի դորովալից մօր համար մտածել, որ զուցէ այլ ևս չէ տեսնելու իւր որդւոյ երեսն, այդ բուռն կրքկիծն կարելի է անմիջապէս կարդալ ամենն մօր դէմքի վերայ. կան վայրկեաններ, ուր լաւ-

թիւնն ամենն հռետորական խօսքերից աղդու և զօրեղ է, կան կսկիծներ, որ միայն լռութեամբ կարելի է տանել, ուստի և շուտով չքացայ մօրս աչքից և ապա մտածմանց անդընդի մէջ ընկղմեցայ. միտքս պաշարուել էր մի տխուր ապագայով և կարծես միայն կամենում էր անցեալի մէջ մխիթարութիւն որոնել. յուսոյ ճառագայթը դեռ չէր թափանցել իմ սրտի մէջ և դեռ վհատեցուցիչ խորհրդածութիւնք ելնէջ էին առնում իմ դլխի մէջ, երբ զգացի, որ դաշտերի առաւօտեան զով քամին փչեց երեսիս։

Արեգակն դեռ նոր էր բարձրանում հորիզոնից և իւր ճառագայթների նշոյլներն արձակելով դալարադեղ մարդերի և դաշտային ծաղիկների վերայ կարծես խաղում էր ոստոստելով և դաշտերին աւելի գեղեցկութիւն և նշողազարդ փայլունութիւն էր ընձեռում. եղանակն մեղմ էր և զովասուն. թռչնոց դայլայլիկն, երփներանդ վայրի ծաղկանց աստ անդ ծածանելը ցորենի կանաչ հասկերի մէջ, ծառերի մեղմ սոսափիւնը և Աղի գետի խոխոջը սթափեցին ինձ իմ մտածմունքից, դլուխս վեր բարձրացնելով ինձ քաղաքից դուրս դտայ և ծծելով զովասուն օդն ու դմայլելով բնութեան գեղեցկութեամբ, ես մխիթարուեցայ և յուսոյ ճառագայթներն թափանցեցին իմ հոգւոյ մէջ,

իրրև ցողի կաթիլներ անապատի մէջ ծարաւեալին։ Դէմքս՝ որ առաջ տխրած էր եւ խորհուն, դարձաւ ծիծաղուն և զուարթ, ուստի և առիթ ունեցայ նկատելու, որ Ա.ֆի (դաուրն) գետի երկու եզրներն ևս մշակուած էին։ Փոքր ինչ յետոյ հասանք կամուրջը։ Այստեղից մինչի Սոֆիան ճանապարհն դրեթէ բոլորն հարթ և տափարակ է. ճանապարհի երկու կողմն էլ ընդարձակ և պարարտաւէտ դաշտեր են ընկած, բայց առհասարակ վատ կերպիւ են մշակուած, ճանապարհի եզերքին տեղ տեղ կարմիր, դեղին ծաղիկներ խառնուելով կանաչ խոտի հետ մի սիրուն տեսարան էին ներկայացնում։ Այսպէս զմայլելով բնութեան գեղեցկութեամբ, մինք հասանք Սնղ գետին կամ Սնըզ Քորփիին (կոտրուած կամուրջ), որ կէս ճանապարհն է Թաւրիզից Սոֆիան։ Ճանապարհն, որ տանում է Սնղից մինչ ի Սոֆիան — առաջին իջևանատունն, հարթ և տափարակ է, երկու կողմերը ընդարձակ, արգաւանդ և լաւ մշակած արտեր և միմեանցից փոքր անջրպետով մի քանի գիւղեր։

Ով որ մի քանի տարի մնացել է Պարսկաստանում, գիտէ թէ այս երկիրը մանաւանդ Ատրպատական գաւառը որ ասոլիճան պտղաբեր և պարարտաւէտ է։ Ի բաց առեալ այն հանքային գանձերն, որոնք երկրի ծոցում

թաղուած են։ Մնացել կառավարութեան անհոգութեան շնորհիւ, միայն Ատրպատական գաւառներն բաւական են բոլոր Պարսկաստանի ժողովուրդը կերակրելու։ Գուցէ չափազանցութիւն թուի այս. բայց ինչ և իցէ չչափելի իրականութիւն է։ Միայն խնդիրն այնտեղ է թէ ինչու մի այդպիսի հարուստ և բերրի երկրի ժողովուրդն այնքան խղճալի և աղքատ դրութեան է ենթարկուած։ Այս զարմանալի հակասութիւնը բացատրելու համար հարկաւոր է փոքր ինչ չեղիլ մեր նպատակից։

Առ հասարակ մահմետական թագաւորները իւրեանց ժողովրդոց հետ կարող են վարվել բացարձակ և անսահման իշխանութեամբ։ Անհատների և քաղաքների վիճակը կախ է Շահի բերանից դուրս եկած մի խօսքից։ Այս ինչ կառավարիչն որքան որ աշխարհաչէն եւ արդար անձն է, բայց եթէ մի փոքր բանի մէջ անհաճոյ դատնուեցաւ Շահին՝ պաշտօնից կը զրկուի, հարստութիւնը կը գրաւվի յարքունիս, ոտքերը կը շղթայուին և աչքից կընկնի։ Սակայն մի ուրիշ կառավարիչ անիրաւ, անգութ, անարդար է, ժողովուրդը հարստահարում և կողոպտում է, հասարակութիւնը բողոք է բառնում, բայց կառավարիչը մի քանի հազար թումանով (որ դարձեալ ժողովուրդն է վճարում) հաճոյանում է Շահին և իւր

պայմանի մէջ յարատեւում, այնուհետեւ ժողովուրդը այլ ուրիշ ճար չունի, եթէ ոչ ծածուկ փախուստ առնել թողլով իւր դաշտերը, տունը, բնակութիւնն և հայրենիքն և գաղթել ուրիշ երկիր, և եթէ փախուստն ևս չը յաջողեց, ինչպէս լինում է շատ անգամ, այն ժամանակ վայ է նրան և կրճտել ատամանց։

Գիւղացին այն, որ ունի մի զոյգ լծելու եզ և մշակում է հող — շատ անգամ ծանր տոկոսիքով փոխ առած սերմը ցանում է, գիւղ ու ցերեկ անդադար առ Աստուած կարդում որ Աստուած երկնից դռները բանայ և անձրև տայ, որպէս զի հողն իւր հարկը տայ և նա կարողանայ կերակրել իւր ընտանիքը, վճարել թագաւորական հարկը, գիւղատիրոջ հարկը՝ գիւղատիրոջ ծառաները կերակրել, գիւղի մօլլային հոգևոր տուրքը վճարել, ձմեռուան կերակուր և ուտեստ պատրաստել և այն։ Աստուած լսում է չինականի աղերսին, երկինքն առատութեամբ թափում է անձրև, հողն ևս իւր կողմից չէ զլանում պտղաբերել — բայց նորանոր պահանջմունք ծանրանում են խեղճ գիւղացւոյ վերայ — հարկաւոր է փոխ առած սերմի կրկնապատիկը վճարել, որովհետև այն ժամանակ որ փոխատուն սերմ էր տալիս, ցորենը խիստ թանգ էր, այժմեան գնի կրկնապատիկն էր։ հարկաւոր է մի քանի օր թողուլ իւր հունձն և գնալ ձրիաբար հնձել ուրի (տիրոջ) արտերը, հարկաւոր է տէրութեան կողմից եկած հարկապահանջին ամենայն կերպով պատուել, ամեն ընթրիքի վրայ և դառան միս ուտացնել, գիւղատիրոջ ձիաները կերակրել և այլ անհամար պահանջմանց բաւականութիւն տալ։ Այսպէս գիւղացին այս տարի ևս չէ կարողանում վճարել իւր պարտքը — տոկոսները գիրվում են, պարտատեառն պահանջը հետ զհետէ սաստկանում է, և եթէ Աստուած բարկացաւ ու պատուհասներ ուղարկեց գիւղի վերայ, անձրև չեկաւ, կարկուտ տեղայ, աւազակները թափուեցան, տէրութեան կողմից մի նոր հարկ, օրինակ զինուորական հարկն, աւելացաւ, այն ժամանակ Աստուած հեռու անէ, այլ ևս անպատմելի են խեղճ գիւղի ցաւերը։

Մի ուրիշ դժբաղդութիւն էլ, որ ժողովրդեան աղքատութեան եթէ ոչ բուն, գոնէ գլխաւոր պատճառն՝ նահանգների կառավարութիւնը կապալով տալն է։

Նահանգների կառավարութեան համար չեն որոնվում արդար, աշխարհաշէն, ընդունակ, ժրաջան, ուսեալ ու կրթեալ անձինք, այլ միայն նկատվում է փողի շատութիւնը։ Թէև այդ գումարը կառավարչի կողմից տրվում է իբրև ընծայ, բայց այդու ամենայնիւ չէ կա-

ելի հերքել, որ այդ ամբաստանութիւն է, որովհետև եթէ դուրս եկաւ մի ընչաւէտ իշխան կամ սոսկ ազնուական, որ ընծայն փոքր ինչ աւելացրեց, նա անմիջապէս կը նշանակուի կառավարիչ։ Այսպէս՝ երբ նորընտիր կառավարիչը վերջացնում է իւր սակարկութիւնն և մտնում է իւր պաշտօնի մէջ, նա ինքն անգամ չը գիտէ թէ քանի օր, քանի ամիս կամ քանի տարի կարող է իւր պաշտօնի մէջ մնալ, բոլորն կախուած է ընծայի քանակութիւնից։ Նոյն իսկ այն բոպէին, որ կառավարիչը խրոխտաբար հրամայում է, և իւր իշխանական աթոռի վերայ բազմած զանազան կարգադրութիւնք է անում, վճիռներ է տալիս և յուսով է, որ մի քանի տարի կարող է շարունակել իւր պաշտօնը, մտադիր լինելով բարւոքել ժողովրդի թշուառ դրութիւնը, վերջ տալ բռնաւոր խաների կամ աղաների հարստահարութեանց—նոյն իսկ այն բոպէին—կըբկնում ինք — ահա յանկարծ կը ստանայ մի հեռագիր, որ իւր պաշտօնից ձգուել է։ Շատ անգամ պատահում է, որ իրօք կառավարիչը դիտուն և խելօք մարդ լինելով կամենում է մի քանի բարեկարգութիւնք անել, ամոքել ժողովրդի ցաւերը, բայց ապահով չը լինելով թէ արդեօք յարատեւելու է մի քանի տարի իւր պաշտօնի մէջ կամ իւր յաջորդն շարու-

նակելու է յառաջ տանել իւր ձեռնարկութիւնքն, նա՝ չընայելով իւր բոլոր ցանկութեանց անկարանում է որ և իցէ մի բան անելու։

Քուրդստանի գաւառում ժողովրդի ապրուստի միակ միջոցն երկրագործութիւնն է. ուստի խեղճ Քուրդը աչքը անկում է թէ երբ ցորենի գինը փոքր ի շատ պիտի բարձրանայ, որ կարողանայ մի բան վաստակել. բայց այդ ևս չէ յաջողում իրենց. անդութ վաչխառուներն շատ արժան գնով իրենց պարտք տուած դումարի տեղ առաջուց ցորենի սակարկութիւն են անում գիւղացւոց հետ, և երբ ցորեանն ժողովում են և ամբարանոցներն լցնում, այն ժամանակ սկսում են գինը բարձրացնել. այդ միջոցին գիւղացին իւր ունեցած ցորենն ձմռան ուտում է է իւր ընտանեաց հետ և երբ ժամանում է գարունն, նա չունի սերմ, ուստի ստիպուած է դիմել ամբարատէրերին և նոցանից փոխ առնուլ մէկի եռապատիկը կամ զուցէ քառապատիկը վճարելու թէութեամբ կալի ժամանակ։

Դարձեալ եթէ մի գուցէ չրջակայքում յայտնուեցաւ յուղկահարների մի գրոհ և որ և իցէ մի անցորդ կամ կարաւան (եթէ միայն հարուստ են) կողոպտուեց, գիւղն պարտաւոր է տուժել վնասն. միայն այս ևս պիտոյ է ասել, որ թէև երբեմն աւազակներն նոյն իսկ գիւ-

(10175) 45-2012

ՀԱՅԱՍՏԱՆ

ղի բնակիչքն են լինում, և այդ կարգն այդ պատճառաւ է հաստատուած, բայց սակայն բաղմից պատահում է, որ գիւղի բնակիչք ամենևին տեղեկութիւն ևս չեն ունենում։ Շատ անգամ էլ լսում են, որ լեռնաբնակ կամ վրանաբնակ աւազակների մի հրոսակ հորդան է տալիս մի ամբողջ գիւղի վերայ և կողոպտում։ Թաւրէզ եղած ժամանակս, դարձեալ Սպահանու կողմերից սկսել էր Հայոց գիւղերի դաղթականութիւնն. երբ պատճառն հարցի, ինձ պատասխանեցին, որ Բախթիարի եւ Լորի աւազակ հրոսակաց ձեռքից են փախչում, դի օր ցերեկով յանկարծ տեսնում են 30 — 40 հոգի թափեցան գիւղի վերայ, էշ, ձի, եզ, կով եւ ոչխար առջեւ ձգելով սկսեցին տանել, վայ այն գիւղացուն, որ համարձակեցաւ ընդդիմանալ, անմիջապէս սրոյ բերանին կըտան. կառավարութիւնն թէև ցանկանում է արգելել այդ հրոսակների ասպատակութիւնքն, բայց չատ անգամ և դուցէ միչտ իւր զօրքերն կոր'ի գլուխ յետ են դառնում յաղթուած։

Նոյնպէս ճանապարհի վատութիւնն, անհարթութիւնն մեծապէս վնասում են բնակչաց բարեկեցութեան. յաւելացրու և երկիւղն աւազակներից. չատ բան գիւղացին կորցնում է՝ ի զուր տեղ, մինչդեռ եթէ ճանապարհներն անվտանգ և հեշտանց լինէին, կարող էր բերել

մայրաքաղաքն և ծախել։ Վերջին ժամանակներս ձայն տարածուեցաւ որպէս թէ տէրութիւնն ընդ փոյթ կը ձեռնարկէ խճուղիներ շինելու։

Բայց այդ խոստումը դեռ կատարում չը ստացաւ և անհնարին է, քանի որ պետական անձինք ամեն մի փոքր ձեռնարկութեան մէջ միչտ անձնական չահ են որոնում։ 1873-ին, երբ Շահն կամենում էր Եւրոպա այց եկանել, մի քանի ամիս յառաջ՝ այն է 1872-ի ամառն 22,000 թմն. փող է ուղարկում.(*) Բաչթի կուսակալ իւր հօրեղբօրն, որ ճանապարհներն չինել և լաւ մաքրել տայ, որպէս զի կառքերն կարողանան անցուդարձ անել։ Կուսակալը առանց ուշադրութիւն դարձնելու իւր դրպանն է ձգում այդ գումարն, յոյս ունենալով որ հոգեորականք յետ կը կանդնեցնեն Շահին իւր դիտաւորութիւնից- բայց յանկարծ ձմեռն հրաման է դալիս, որ ահա Շահն ուղում է դուրս դալ իւր մայրաքաղաքից։ Կուսակալն խռոված անմիջապէս մի քանի հազար գիւղացի հաւաքում և այն ձմեռն նոր սկսում ճանապարհն չինել տալ. միւս կողմից չուտով մի երկու հազար թուման է հաւաքում ժողովրդից և ընծայ ուղարկելով իւր վեհափառ հօրեղբօրն՝

(*) Revue des Deux Mondes, 1875 Mars-

աղերսում է ժողովրդեան կողմից, որ յետ կենայ իւր դիտաւորութիւնից, ըստ որում ժողովուրդն չքաւոր գոլով անկարող է ամեն պատուով և չքեղութեամբ ընդունել զիւր վեհապետն։ Շահին ընդունելով ընծայն, այդու ամենայնիւ ճանապարհ է ընկնում և ի հարկէ Բաչի հասանելով յետ է առնում իւր փողերն և կուսակալն էլ ձգվում է իւր պաշտօնից...

Մօտ առաւօտեան ժամը 10-ին հասանք Սոֆիան, ուր գտանվում է սուրհանդակատան առաջին կայարանը։ Սա բաւականին մի մեծ գիւղ է, և ըստ ասութեան բնակչաց 50 տուն ունի, գեղեցիկ պտղաէտ, և մեծատարած այգիներով, կանաչազարդ մարգագետիններով և պարարտաւէտ արտերով։ Բնակիչք պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, բայց իրրև խորամանկ Պարսիկներ նոքա շատ լաւ գիտեն օգուտ քաղել իջևանող օտարականների քսակից և եթէ նորեկը աչքաբաց չէ, անտեղեակ երկրի դրութեան, պէտք է ամեն բանի գնի կրկնապատիկն ու եռապատիկը վճարէ։ Պարսիկը սովոր է միշտ արտաքին կերպարանքից և դրութիւնից դատել։ Մտնենք մի գիւղ։ եթէ պճնօրէն կամ վայելչապէս՝ մանաւանդ ալաֆրանկայ՝ հագուած ես, քեզ մեծաւորի կերպարանք ես տալիս և երիվարդ տակիդ նաղելով քայլում է, խիստ յարգալից ընդունելու-

թիւն կարող ես գտնել։ Հապա թէ չարժողութիւն արիր իջանելու, ահա 3—4 հոգիք շուտով կը վազեն, ձիդ ասպանդակը կը բռնեն, խոր կերպիւ գլուխ կիջեցնեն, կսկսեն հարցնել թէ ձեր մեծապատուութիւնը նեղութիւն չէ՞ քաշել ճանապարհին, և եթէ հարցրիր ուստ է այս տունը կամ այգին, տէրն կըպատասխանէ քեզ ընծայ է, այս տունը քոնն է։ Եթէ մի փոքրը մանուկ նշմարես և հարցնես ուստ է, հայրը կը պատասխանէ քո ստրուկն է։

Պարսկաստանի մէջ ճանապարհորդողը պէտք է ամեն պարագայ իւր հետ ունենայ, մանաւանդ անկողին, խմելիք, թէյ, շաքար և այլն, եթէ ոչ շատ նեղութիւն կը քաշէ։ Գիւղերի մէջ ուտեստ կարելի է գտնել մի այն կաթնեղէն, միս և պտուղ, եթէ գիւղն ունի այգիներ։ Շատ անգամ ճանապարհորդն ստիպուած է լինում ախոռներում օթևանել, իսկ եթէ սուրհանդակատուն կամ քարվանսարայ կայ, աւելի լաւ է այդտեղ իջևանել։ Երբ նստար մի սենեակում հանգստանալու, ահա կը տեսնես մի սըղայ մի փունջ ծաղիկ քեզ համար ընծայ է բերել, մի պառաւ կին մի ման սեր կամ մածուն քեզ նեղլ (ուխտ) է արել, մի հովիւ մի զառն է բերել քեզ համար մատաղ անելու և սոցա ամենի համար անշուշտ ստիպուած ես վճարել առատօրէն, եթէ կամենում ես պան-

պանել նոցա քեզ վերայ ունեցած կարծիքը։ Բայց այս ևս պէտք է 'ի նկատի ունենաս, որ այն դառը միայն ճաշին կը տեսնես, հաղիւ թէ զլուխը կտրեցին և ահա կհամբերմիվեն ու քեզ մի մաս հանելուց յետ մնացեալն իրենք կը մաքրազարդեն։ Եթէ որ և իցէ ուտելու մի բան խնդրեցիր. օրինակ՝ սեր, կաթաց, մեղր և այլն, սովորաբար կը սկսեն ասել որ չը կայ, հաղուագիւտ է և կը վերջացնեն խոստանալով, որ ամեն հնար 'ի գործ կը դնեն քեզ համար ճարելու, որպէս զի զինը շատ առնեն։ Շատերն ևս քո առաջև իրենց մաքուր մուսուլման ցոյց կը տան և եթէ հրաւիրես մասնակցել ճաշին կամ թէյին, կը հրաժարին, բայց այդ հրաւէրից օգուտ քաղելով կը խնդրեն, որ թոյլ տաս իրենց ձեռքով մի մաս ոչխարի կամ գառան մսից կտրեն, կամ փոքր ինչ չաքար տաս դեղի գործածութեան համար և այլ այսպիսի պատրուակներ...

Մենք իջանք քարվանսարայում, նախաճաշիկ արինք և պարկեցինք փոքր ինչ հանգստանալու։ Մեր նստած սենեակի լուսամտի դէմ յանդիման կապուտ հողով ծակծուած դմբեթի նման մի հիւղ կար և երբ հարցրինք ինչ լինելն, «Սոֆիանի փիրն» է ասացին։ Գրեթէ ամեն մի գիւղում կը պատահես այդ «փիրերին» կամ «իմամների անուրին» ուր պարսիկներն ուխտ են գնում, ճրագ են վառում և ամեն մի գնացող մի քար է ձգում իմամի դերեզմանի վերայ, երբեմն մի հրաշալի աւանդութիւն ևս կցուած է լինում այդ «պիրի» հետ և զարմանալի զօրութիւններ են ընծայում նորան։ Փիրն մի և նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ ունին Հայոց մէջ նահատակ կոչուած քարաղէղ ուխտատեղիքն։

Փոքր ինչ հանգստանալուց յետ մեք սկսեցինք դարձեալ չուել, որ գեռ չերեկոյացած Մարանդ հասանենք։ Սոֆիանից դէպի Մարանդ երկու ճանապարհ կայ. առաջինն, որ կոչվում է Եամ, շատ հարթ դեղեցկաղուարճ, երմներանդ ծաղիկներով, բարեհամ աղբիւրներով և երգող թռչունների՝ լի է, բայց սորա հեռաւորութեան պատճառաւ երկրորդ ճանապարհն ընտրեցինք, որ աւելի կարճ է և մինչի կէսն նոյնպէս հարթ և տափարակ է։ Շատ զմայլելի տեսարան էին ներկայացնում արտերն իրևանց դալարութիւնով հովը մեղմիկ դուրդուրելով լայնատարած արտերի վերայ վէս վէտ ծփանք էր յառաջացնում։ Բուսարանի առաջն հետաքրքրութեան մի լայն ասպարէզ կարող էին բանալ դաշտերն, որ բազմերանգ վայրի ծաղիկներով և բոյսերով լի էին։

Այսպէս գնացինք մինչի Նոր Գարա (աղի ձոր) գիւղն։ Այսպէս կոչուելոյ պատճառն այն

է, որ հողը աղախառն է, ջուրն նոյնպէս աղի բաղադրութիւն ունի և մի անհաճոյ համ։ Այստեղից ճանապարհն սկսում է ծռմռուել, դառի վայրներ, խորտուբորտ չափիներ, խոր ձորեր, ուր երբեմն պատահում են և աւազակութիւնք։ Այդտեղ մենք հանդիպեցանք մի քանի խեղճ մշակների՝ որք մի ժամ յառաջ կողոպտուել էին աւազակներից։ Եղկելիքն դառն յուսահատութեան մէջ էին, որովհետև Իւրեանց բաղմամեայ աշխատութեան վարձն մի բոպէում չքացել էր ի տարաբաղդութիւն Իւրեանց հէգ ընտանեաց։ Ի՞նչ կարող է անել խեղճ մշակը, եթէ դիմէ իշխանութեան, զուցէ աւելի վնաս քան օգուտ ստանայ։

Մի քանի զարտուղի չափիներից անցնելով մենք հասանք մի բլրակի ստորոտը և բարձրանալով նորա գագաթի վերայ, մեր աչքութեան ներկայացաւ ի բացուստ Մարանդ գիւղաքաղաքն մի տափարակ դաշտի մէջ։ Դեռ երկու ժամուան ճանապարհ ունէինք։ Բլրից վոքր առ վոքր իջանելով մի զով աղբիւրի ջրից յագեցրինք մեր ծարաւն, որովհետև արեգակի ջերմութիւնը սկսել էր ներգործել մեր վերայ, և վերջապէս մտանք հարթ դաշտի մէջ և մեր առաջն բացուեցաւ կանաչաղարդ արտերի մի երկար շարք։ Արտորայքն գեղեցիկ և լաւ մշակուած էին և բերքի առատութիւնը

ցուցանում էր հողի արդաւանդութիւնը։ Ճանամը $3^1/_2$ ըստ Եւրոպացւոց մտանք Մարանդ և դնացինք իջևանելու սուրհանդակատան կայարանում։

—

Դ.

Հնութեան հետք է կրում այս գիւղաքաղաքը, և արդէն ԺԴ դարում երևելի քաղաք էր. ինչպէս Գանձակեցի Կիրակոս պատմագիրն աւանդում է, որ մեծամեծ իշխանք Զաքարէ սպասալարն և իւր եղբայր Իվանէն շատ զօրքով դնալով Մարանդ քաղաքի վերայ առին դնա և աւերեցին չրջակայ դաւառները *)։ Մարանդի այդ առումը պատահեց Ռուբինեան Լևոնի թագաւորութեան ժամանակ։

Հայ պատմագիրք աւանդելով, որ Նոյ Նահապետի կինն այստեղ է թաղուած, Մարանդ բառն «Մայր անդ» բառի կրճատումն են համարում։ Բայց թէ իրօք Նոյի կինն այստեղ մեռաւ և այստեղ թաղուեց, այդ իրողութիւնը դեռ կարօտ է պատմականապէս լուծուելու և ստուգուելու, թէև աւանդութիւնն, պատմութեան այս մութերիմ օրնականն, դարուց ի դար կտակել է դայն Հայերին և սոքա Իւրեանց ժա-

*) Կիրակոս էջ 107. տիպ. Մոսկուա 1858։

ռանգներին։ Եւ իրօք Թուրքերը այսօր իսկ ցոյց կը տան քեզ մի մզկիթ. որոյ միջումն կայ մի գերեզման, որ մեծ ուխտատեղի է, և այդ է — ինչպէս ասում են իրենք — Նոյ Նահապետի կնոջ — Նոյեմզարի շիրիմն։ Անշուշտ ժամանակաւ Մարանդ հայ քաղաք է եղել և եկեղեցիք է ունեցել, որոց տեղ այսօր բարձրանում են մզկիթներ։ Փոքր ինչ հեռու քաղաքից Թուրքերն ցոյց են տալիս մի մեծ սարակի վերայ նոյնպէս մի ուխտատեղի, որ դարձեալ «ի մ ա մ ղ ա դ է» կամ «ջնաս ա-նունն է կրում, ով գիտէ դուցէ Նոյի որդիքներից կամ Թոռներից մէնն է Թաղուած այնտեղ։

Այժմեան Մարանդը մի գեղեցկադիրք գիւղական քաղաք է կամ այսպէս ասել մի մեծ գիւղ 1500 տուն բնակիչներով։ Խոյ և Սալմաստ գաւառների հեռագրական գիծը այստեղից է բաժանվում Ջուլֆայի հեռագրական գծից։ Եթէ Թիֆլիսից մինչի Ջուլֆայ և Թաւրէզ երկաթուղոյ շինութիւնն յաջողուի, Մարանդ վաճառականական մեծ դեր կխաղայ իւր գեղեցիկ դրից շնորհիւ։

Պտղաւէտ և ընդարձակ այգիներ շրջապատում են նորան, պտուղների մէջ մանաւանդ խաղողն անուանի է, հողն էլ բաւականին պարարտ և արդաւանդ է։

Մարանդն ունէ իւր յատուկ շուկան, իւր արհեստաւորների դասը — կօշկակար, հիւսն, որմնադիր, դարբին և այլն. մեր Թուրք ուղղկիցների մէնն մի զոյգ կօշիկ էր գնել երկու և կէս մանէթի, ճիշդ նոյնպիսի գործ, որ կարելի է գնել Երևանում կամ Թիֆլիսում 4—5 մանէթով։ Զարմանալի ընդունակութեան տէր են պարսիկք. Պարսիկ արհեստաւորը իւր յոռի և անպիտան գործիքով, առանց նորագիւտ մեքենաների շինում է հեշտաւոր, վառարան, յար և նման եւրոպականին, ցոյց տուր նորան որ և իցէ իրեն անծանօթ եւրոպագործ մի շինուածք, նա մի քանի շաբաթից յետոյ մի և նոյն ձևով կը շինէ քեզ համար նորը։

Ի հարկէ եթէ տէրութիւնը հոգ տանէր բարւոքել արհեստաւորների դրութիւնը՝ հայթհայթելով նոցա միջոց կատարելագործելու իւրեանց արհեստն և օր ըստ օրէ ճոխացնելու իւրեանց տաղանդն, ու մատակարարէր նոցա եւրոպական մեքենայք, և մի քանի ուշիմ, հանճարեղ երիտասարդներ յղէր Եւրոպիոյ արուեստագործական դպրոցներն, որպէս զի անդ հմտանալով արուեստագիտութեան՝ ի վերադարձին իւրեանց հայրենիքը, ուսուցանէին և իրենց հայրենակցաց. այն ժամանակ տէրութիւնն ոչ թէ միայն նպաստած կը լինէր իւր երկրի նիւթական դրութեան, այլ և կարօտ չէր

լինի այնքան թանգ գնով արտասահմանից բերել տալ այն ամենն, ինչ որ իւր երկրի արհեստաւորները լաւ կարող էին ձեռակերպել։ Եթէ ունենան միջոց և գործիք։ Փորձուած իրողութիւն է, որ Պարսիկն ընդունակ է մտաւորական վերին զարգացման, եթէ միայն իւր միտքն մշակելու համար ունենայ հարկաւոր նիւթեր և զարգացուցիչ առարկայք։ Այս Պարսկաստանն, որ այժմ ամենայետադէմ երկիրներից մինն է համարվում, կար ժամանակ, որ մի բարգաւաճ և լուսաւորեալ դրութեան մէջ էր։ Խրոխան Քսերքսէս, իւր նաւատորմիղով ծածկելով յունական ծովի երեսն, ընդունայն տեղ չէր պարծենում, նա ուէր կանոնաւոր և կրթեալ զօրք, նա տիրապէտում էր մի չատ փարթամ ժողովրդեան, արուեստներն, վաճառականութիւնը, գիտութիւնքն(*) ծաղկած էին

(*) Թաւրէզ եղած ժամանակս իմ ձեռքս ընկաւ մի շատ մեծանատոր Պարսկերէն ձեռագիր. դա էր «Զէխիրէյի Խարազմ Շահի» կոչուած հռչակաւոր բժշկարանն, որ շատերն կորսուած էին համարում։ Մի քանի թերթ կարդալով ես զարմանօք դիտեցի, որ անդամաղննական եւ ֆիզիօլոգիական գիտութիւնքն բաւականին ստուգութեամբ գրուած էին։ Նոցա մէջ յաճախ պատահած յոյն բառերից երեւում էր, որ Խարազմ Շահն կամ Թարգմանաբար

նորա երկրի մէջ, և դեռ մինչ այսօր Պարսիկները պնդում են, որ այժմեան հեռագրի գիւտն ի հնումն գոյութիւն է ունեցել Պարսկաստանում, որ մի քանի գիտնականք բերել էին այն Եգիպտոսից։ Այս մասին մի երկար պատմութիւն են յառաջ բերում և քանի մի հին ձեռագրներով կամենում են հաստատել իրենց ասածը։ Ուրիշ ժամանակի թողլով հաղորդել մեր ընթերցողներին այդ պատմութիւնն, ես կամենում եմ պատմել այստեղ մի հետաքրքիր իրողութիւն։

Մի օր մի Պարսիկ երիտասարդ ներկայանում է Ալի խան զօրապետին, որ այժմ Նայիբով վզարայ է Թաւրիզում, և ասում, որ ինքն գտած լինելով մի շատ օգտաւէտ գիւտ, կարօտում է կառավարութեան օգնութեան այդ գիւտի կատարելագործութեան և հասարակութեան ընծայելու համար։ Ալի խան հետաքրքրուելով կամենում է փորձել այդ գիւտի զօրութիւնն։ Երիտասարդն սենեակի մէջ դր-

հաւաքածոյ էր անել տուել հելլենական փիլիսոփայական գրքերից իւր ժամանակում ծաղկող հելլենապիրների ձեռամբ, եւ կամ այդ գրքի հեղինակներն հմուտ լինելով յունական բառերին հետեւել են յոյն բժիշկների եւ առաւելաբար Հիպոկրատի գրուածոց։

նում է մի արկղ (որոյ մէջ ծածկուած է մեքենայն) և խնդրում է խանին իւր ծառաներից մէկին ուղարկել մի հեռու սենեակ. ապա երիտասարդը խանի ասած մի քանի խօսքերն հաղորդում է արկղի միջոցաւ սպասաւորին, եւ երբ վերջինս վերադառնալով այն հեռու սենեակից կրկնում է խօսքերն, խանն յապաւուշ է կրթվում. Ասել է թէ այդ արկղի միջոցաւ երկու հեռաւոր անձինք կարող են բանակցել, ի հարկէ այդ շատ նման է հեռագրական թելին, բայց զանազանութիւնն այն է, որ բանակցութիւնն կատարվում է առանց թելի միջնորդութեան։ Հնարիչ երիտասարդն 50,000 թուման է պահանջել Դաւրէժից Թէհրան այդ բանակցութիւնն հաստատելու համար։

Շատերը համակրել են, ոմանք խարդախութիւն համարելով անդոռնել են։

Բայց դառնանք դէպի Մարանդը։

Այդ գիւղաքաղաքի արհեստաւորներն բացի լաւ կօշկակարութիւնից գիտեն յօրինել և դանակ, որ Թաւրիզում չինուածներից ընտիրն է։ Բնակիչք պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, խաշնապահութեամբ, մեղուաբուծութեամբ, այգեպանութեամբ և այլ մանր արհեստներով, Եւ որովհետև պարարտ արօտատեղիներ ունին, ուստի և այստեղի կաթը, պանիրը մանաւանդ սերն շատ ընտիր են։

Ձմեռը սերը պահում են ամանների մէջ լցրած և հողի տակ թաղած։ Մանաւանդ զով աղբիւրների անուշ և բարեհամ ջրերն և օդի առողջարարութիւնն ոչ սակաւ նպաստում են բնակիչների առողջութեան և կորովութեան։

Թէև Մարանդ Ղիբրև գաւառական քաղաք հաշուելով ունի իւր կառավարիչ-իշխանը (Շահդադէ), բայց նորա արտաքին երևոյթն ոչնչով չէ զանազանվում հասարակ գիւղերից։ Բնակիչների զգեստն նոյն ոչխարի մորթուց կարած հաստ գոտկն է, նոյն ոչխարի բրդից մանած վարտիկը. կարճ բաճկոնակն ու տրեխները։ Կանայք իրենց դրան առաջին կամ ցեխ են չինում անասնոց աղբից և բոլորակներ կազմելով կպցնում են պատերից այրելիքի համար և կամ իրենց ամուսինների հետ աշխատում են դաշտում։ Հասակաւոր երեխայքն կամ գնում են Մզկիթ ախունդի մօտ կարդալու և կամ օգնում են իւրեանց հօր դաշտերում. իսկ փոքրահասակներն տկլոր արևի կիզիչ ջերմութեան ներքոյ խաղում են հողերի մէջ թաւալուելով։ Այսքան ես կարողացայ նկատել Մարանդի մասին, որովհետև չափազանց յոգնած և վարաակաբեկ լինելով, մեր առաջին գործ եղաւ հանգստանալ մինչև թէյի պատրաստ լինելը։

Երբ պատրաստ եղաւ, մեզ հրաւիրեցին վերնասենեակը. արդէն մի բազմութիւն, որ առաւել թէյի հոտից քան մեզ ողջունելու նպատակաւ էր եկած, շարքով նստած էր։ Թուրքերն հոգի են տալիս թէյի համար, ինչպէս Օսմանցւոց համար սուրճը նոյնպէս և Պարսիկների համար թէյը անհրաժեշտ ըմպելիք է դառել. մանաւանդ մեծամեծների տանն, օրն 5 — 6 անգամ կը խմեն, իսկ հասարակ ժողովուրդը չուկայում կը գնէ յատուկ թէյավաճառներից։ Եւ որովհետև թէյն և շաքարն մերը լինելով նոցա համար ձրի էր, ուստի ամեն մի անձն մի պատրուակաւ ներս էր մտնում և թէյին մասնակցում։

Երեկոյեան ընթրիքն անելուց յետ. տանուտէրն որպէս թէ կամենալով մեզ զուարճացնել հարցրեց մեզ. արդեօք կը ցանկայինք տեսնել մի չաբէհ (տեսարան)։ Մեր սաորասական պատասխանի վերայ, ներս մտաւ մի անձ գըլուխը փաթաթած և ձեռքին մի տետրակ բռնած։ Նա նախ մի աղօթք անելով սկսեց երգել և ապա հեգնութեամբ կարդալ ու դարձեալ երգել։ Այդ էր մի գրուած Պարսկական և թուրք լեզուով խառն, որ ինչ խայտառակութիւնք, ինչ անամօթ, լիրբ խօսքեր ասես թափում էր Օմարի — իւրեանց Ալիի հակառակորդի — գլխին։ Կրօնամոլութիւնն այնպիսի լիրբ, անբարոյական և զաղիր խօսքերի, սուտ

և հնարած պատմութեան մէջ զուարճութիւն է որոնում, կարծելով թէ Օմարին անիծելով և խայտառակելով ուղղակի արքայութիւն կգնայ, ըստ որում դրախտի բարապանն Ալին է։ Ողբալի կուրութիւն.....

—

Ե.

Երկուշաբթի առաւօտ մինչդեռ երկչոտ արշալոյսը դեռ նոր է բացում իւր կախարդիչ պալատի դռները արեգի առաջն, Մարանդ թողինք և ճիշդ հեռադրական գծի ուղղութեամբ ընթանալով դուրս եկանք գիւղից և մեր տեսութեան ներկայացաւ մի ընդարձակ հարթ, կանաչազարդ տարածութիւն։ Այդ է անա Մարանդի արտորայքը։ Առաւօտեան զովասուն զեփիւռն փչելով միջոց էր տալիս մեզ թարմ և առողջ օդ շնչել, միւս կողմից թռչնոց ճռուողիւը, ընութեան զեղեցկութիւնն, աշխատաւոր մշակի երգը հրաւիրում էին անցորդի ուշադրութիւնն և հեռացնում էին նորանից ամեն տխուր մտածմունք։ Մինչի Բօյիւկ Դիւզ (մեծ գաշտ) կոչուած տեղն, ճանապարհն հարթ է և երկու կողմն ևս կանաչ, մշակուած և կամ վայրի կարմրերանգ կակաչներով ծածկված, որոնք փայլում են ի հեռուստ որպէս զմրուխտ։ Երկու ժամ ընթանալէն զինի հա-

սանք Մեծ դաշտին։ Սա մի ընդարձակ, հարթ և անապատ (անմշակ) տարածութիւն է, զուրկ ջրից 3 մղոն երկայնութեամբ։ Կէս ճանապարհի մէջ չինուած կայ մի աւերակ քարվանսարայ, և շատ երկիւղալի է այդտեղ աւազակների պատճառաւ։ Պարսկաստանի մէջ համարեա ամեն տեղ, աւազուտ անապատների և անչէն տարածութիւնների մէջ՝ կը հանդիպես այդ քարուկիր յօրինած, գմբեթայարկ և ամուր քարվանսարաներին, որոց հիմնադիրն է Շահաբաս Ա. թագաւորն, և ուր իջանում էին և իջանում են դեռ ուղևորներն կամ կարավանները գիւղերի հեռաւորութեան պատճառաւ, մանաւանդ որ այն ժամանակ չը կային սուրհանդականներ, և այդպէս ճանապարհորդները պատսպարվում էին բաց օդի երեսից այդ ընդարձակ սրահների մէջ։

Անչուշտ մեծամեծ ծախսեր է արել Շահաբաս, որովհետև մի անբնակ տեղ անապատի, խոր հովիտների մէջ կամ սարերի գլխի վերայ այդպիսի մեծ շինութեանց հարկաւոր նիւթերն — տաշած քարեր, եփած աղիւս, կիր, բուռ, փայտ և այլն, պէտք էր հեռաւոր տեղերից դրաստով բերել։ Երբ Շահաբասի մահուանից յետո Պարսկաստանը սկսաւ զանազան յեղափոխութիւնք կրել. բռնակալները շատացան, յարձակումներն, ասպատակութիւնքը բազմացան,

այն ժամանակ այդ քարվանսարաներն աւազակաց որջեր դառան։ Շատ անգամ երբ մի ամբողջ կարավան յոգնած և վաստակեալներ ակնկալում էր այդ քարվանսարաներում հանգստութիւն գտանել, հաղիւ մտանում էր և ահա աւազակների մի հոյլ դուրս գալով ներսից՝ թափվում էին կարավանի վերայ. այնուհետև երկու կողմից սկսում էր արիւնահեղ կռիւ, մինչև որ մէկ կողմը յաղթում էր միւսին։ Գամ քան դգամ ժամանակի աւերիչ ժանիքը. բռնակալ խաների ասպատակութիւնքը, մանաւանդ տէրութեան անհոգութիւնը դէպի հնութեանց պահպանութիւնն՝ աւերեցին այդ օթեւաններն, որոց շատերի տխուր որմերն և կէս գմբէթներն դեռ կանգուն են մնացել, և ուր երբեմն ուշացած կարավանը հանգստութիւն է որոնում։ Այսպէս օր ըստ օրէ այդ որմերն ևս կործանվում են ճանապարհորդներն անցնում են և «այ ինչ մեծ թագաւոր էր Շահաբասն» ասելով բաւականանում են, ու կառավարութիւնն էլ ամենևին հոգ չէ տանում աւերները վերանորոգելու։ Պարսիկները զըժբաղդութիւն են համարում հնութեանց և աւերակաց ձեռք տալ. նոցա կարծիքով աւերակները կախարդիչ զօրութիւն ունին, գիշերները լսելի են լինում այդ աւերակների միջից հմայողների և դևերի ձայներ. ուստի և չեն

համարձակում մօտ գնալ: Եթէ հարկաւոր լինի մի նոր չինուածք կառուցանել, նոքա կը թողնեն այդ աւերակն և փոքր ինչ նորանից հեռու նորը կը չինեն. այդ է պատճառն, որ Պարսկաստանը լի է աւերակներով, և դուցէ աւերակները չինուածներից շատ են... Մեր տեսած քարվանսարայի որմերն դեռ անվնաս մընում էին, դրան և սենեակների պատերն կապուտ խեցիներով նախշուած էին, իբրև մինայ դրուագեալ ալծաթի վերայ, որ նոյնպէս նկատելի է պարսկական մզկիթների վերայ։

Այսպէս երկար ժամանակ քշելուց յետ, թողինք մեր աջ կողմում Այրանտիպ գիւղն, ուր հաստատուած կայ սուրհանդակատուն, և մտանք Դարաղիղ, որ մի խորտուբորտ, ապառաժոտ, հեղեղից խորացած ձոր է, և ժամը 11-ին ըստ Եւրոպացոց հասանք մի հանքային ջրի մօտ, ուր և իջանք նախաճաշիկ անելու։

Այդ ջուրը բղխում է գետնի տակից և բաւականին տաք է, իսկ ձմեռը, ինչպէս հաւաստեցին մեզ յաճախողներն — եռում է։ Արեւդակն սկսել էր կիզիչ լինել, ամենափոքր հով անդամ չէր շարժում. մեր Թուրք ընկերակիցները սկսան գովել այդ ջերմուկն և հաւաստիացնել մեզ, թէ նորա մէջ լողանալն շատ օգտաւէտ է, մարմինն կը փափկացնէ։ Բայց երբ լողացինք, չարտադրեց այն օգտուտներն, որ

ընծայումէին իրենց։ Կարծեմ դաղի բաղադրութիւն ունէր։ Տաքից գրեթէ նուաղած և թալկացած, մենք շատ նեղութիւն քաշելուց յետ, հասանք վերջապէս Սուճա գիւղն, ուր պէտք է օթևանէինք գիշերը։ Արևի ջերմութեան երեսից պատսպարան որոնեցինք մի հիւղի մէջ, երբ մի ժամ յետոյ երկինքն մթնացնեցաւ, ամպերն դիզուեցան, սկսաւ որոտալ, և ապա մի յորդ անձրև թափուելով, օդն զովացրեց։

Ընթրքից յետ, մենք շուտով հանգստացանք, և չը նայելով զանազան տեսակ միջատների, որոնք անդադար քամում էին մեր արիւնը, մի խոր քուն քաշեցինք մինչև առաւօտ։

—

Զ.

Ցերեկուան պայծառ աստղն արդէն իւր փայլուն ճառագայթները սկսել էր արձակել երկրի վերայ և առաւօտեան երգեցիկ թռչունները բիւր դայլայլիկս էին յօրինում, երբ սթափեցանք Մորփէոսի մեղ աղդած քնից։ Իմանալով, որ Արաքս շատ մօտ է Սուճայից, իմ սիրտս սկսաւ թնդալ. բիւր հայրենի մտածմունք գրաւեցին իմ միտքը. ահա ես տեսնելու եմ Արաքսը, դոռոզ Արաքսը, հայրենեաց

վտակը, ականատես եմ լինելու նորա կոհակների ոստոստման, այն կոհակների՝ որոնք շատ անգամ արնաշաղախ են եղել Արաքսի հարազատ որդիների արեամբ։ Ես երևակայում էի իմ մէջ Արաքսի գոռում ու գոչումը, նորա փրփրադէզ ալիքներն և օձապտոյտ մանուածներով յառաջ խաղալը... բաբէ, Հայաստանում ճանապարհորդողը միշտ ենթակայ է տըխուր երևոյթների, դառն խորհրդածութիւնների.....

Սուճայից դուրս եկանք։ Այս մի մեծ գիւղ է Թուրքաբնակ, բնակչաց մեծ մասն աւաղակ են և առաջին պարսկական գիւղն է սահմանագլխում։ Անշուշտ սա ժամանակով Հայի չէն է եղել... Սուճայից մինչի Ջուլֆայ կամ Արաքսի եզրը ճանապարհը հարթ և տափարակ է և կէս ժամու հեռաւորութիւն ունի։ Ցընթացս ճանապարհի Թուրքերի մէկը սկսաւ պատմել Ստեփաննոս Նախավկայ վանքի ուխտագնացութիւնն, առ որն նոքա մի առանձին յարգանք են ցուցանում, և հին Ջուղայի տեղն մատով ցոյց տուեց։ Այդ միջոցին Արաքսի ջրերն 'ի հեռուստ երևացին, սիրտս սկսաւ տրոփել. Ստեփաննոս Նախավկայ և Հին-Ջուղայ անուանքնտրտմութեամբ լցրին իմ սիրտը։ Քանի մօտենում էինք՝ այնքան յուզմունքս շատանում էր. բուռն երևակայութիւնը իմ աչքիս առաջն պատկերացնում էր այն սարսափելի անցքն, որ 270 տարի յառաջ պատահել էր Հին-Ջուղայու Հայերին. ահա Շահաբաս, հեծած իւր արքայական գեղաղատի վերայ կանգնած է և հրամայում է իւր զօրքին յառաջ վարել Թշուառ Հայ ժողովուրդը։ Խեղդուողծերերի աղաղակը, մարց կականալիր ողբը, անմեղ մանկանց և օրիորդաց գոռում ու գոչումը, վայրագ զինուորների կատաղութիւնն և անզթութիւնը, նիզակների վերայ ցցուած գըլուխները սարսափ են աղդում ինձ, ես գնում եմ առանց հասկանալու, մեքենայաբար, կարծում եմ, որ երբ Արաքսի մօտ հասնեմ, նորան արնաշաղախ եմ տեսնելու, իմ Թշուառ Հայ եղբայրների ձայնն եմ լսելու, որ օգնութիւն են կանչում. ես սպանում եմ—քաջալերութիւն եմ տալիս, անիրաւ, վայրենի զինուոր՝ ինչու քաշքաշում ես այդ հրեշտականման կոյսը, ահա կը սատակեցնեմ քեզ, ասում եմ, ձեռս տանում սրիս, որ խփեմ, երկու կտոր անեմ, բայց կողմս սուր չը կայ...

Միայն Արաքսի վշվշալն ինձ իրականութեան բերաւ. ես կանգնած էի ցանկացեալ գետի առաջն. նա ընթանում 'էր յամրաքայլ, պղտոր և մռնչելով. դարուց դարուց յիշատակներ ծածկում էր նա իւր խորքերում. խռոված էր նա

և կարծես լռելեայն հեծում էր..... Այստեղ դրեթէ մեքենայաբար իմ շրթունքներս մըրմըջացին «Մայր Արաքսի ափերով» երգը։

Մենք դեռ Պարսից սահմանումն էինք, Ջուղայ կոչուած տեղում, ուր Պարսից սուրհանդակատունն և պարսկական ու Հնդկա-Անգլիական հեռագրատունքն են։ Ամառն, ինչպէս ասում են, անտանելի տաք է լինում այստեղ, օդն ջերմալից է և տենդոտ. պարտէզ կամ այգիք չը կան, միայն հովն երբեմն երբեմն շարժում է մի քանի անպտուղ ծառեր, աստ անդ ցրուած։ Փորք նաւակներով անցանք միւս եզրը՝ն, ոտք կոխեցինք Ռուսաց հողի վերայ եւ կոմիսարին սովորական յարգանքը մատուցանելուց յետ, նստեցինք փոստայի փոքր կառքն ու մի քանի ժամ ճանապարհորդելով մի դատարկ անապատով, վերջապէս ժամանեցինք Նախիջեւան քաղաքն, եթէ միայն կարելի է սորան քաղաք կոչել։

8067